ան՝ յետ տարագրութեան Չէրքէզաց՝ Ռուս գաղթականք եկան հոն, և թէ ա-սոնց թէ հին մնացեալ ազգաց բոլոր թիւն 220,000ի կը հասնէր. այսպէս.

Ռուսք	100000
Նողայիք	4500
Գարաչայի	17000
Ապազա	5000
Նագուխա	26700
Պշէտուխք	20000
Քաբարտա	6500
Ապազեկք	8000
Շափսուդք	13000
Հայք	5000
Այլ և այլ ցեղք Չէրքէզաց	12000

Այս թուոյս մէջ եղող մերազգի գաղթականք շատոնց մտեր և մնացեր էին Չէրքէզաց մէջ, անշուշտ գերութեամբ, ուր և լեզունին և բարքերնին ալ քիչ շատ կորսընցընելով՝ դեռ իրենց կրօնքն և ազգութիւնը պահած էին, թէպէտ և շատ տարիներ քահանայէ ալ զուրկ մնալով. 1837ին Ռուսաց Զար զօրապետը հանեց զանոնք՝ 800 տուն՝ Չէրքէզաց միջէն, և Քուպանի վարի կողմերը բնակեցուց, ուր և շինեցին Նոր Արմաւիր քաղաքը։ Հիմայ յիշուած 5000 Հայքն ալ ասոնք պիտի ըլլան, գոնէ մեծաւ մասամբ։

ԱՌԱԿ

Արեգակն խօսնայր և գորտք.

Ի հարսանիս բրոնաւորին,
Մինչ ընդ գինիս մրտեալ ռամկին,
Ուրախանայր յերգ եւ ի պար,
Զայս՝ Եսովպոսն յոգնահանճար
Առակ՝ պատշաճ յայն ի դէպ
Նոցա էարկ առ ի վէպ։—
Նոր հաստատեալ զաստեղց ջուիր
Զվերին կամար եւ ծովուն ծիր,
Ապա խորհէր երկնիցն արքայ,
— Արեւ՝ եւ ոչ զայլ ոք իմա,—
Ըստ օրինի հասարակաց
Ածել իւր կին զոք յաստեղաց։
Անտուստ հապ ճեպ ջոջ ծեր գորտեր՝
Բարձեալ ըզգլուխ ընդ ջուրս ի վեր,
Առ Արամազդ Ամպրոպայոյզ,
— « Եթէ ի քեզ կայցէ գէթ դոյզն
» Առ քո, ասեն, գութ՝ արարածս,
» Շրջեա՛ զարեւդ զայդ ի մրտաց։
» Ըզմին եւեթ հազիւ հաղ,
» Խարշեալք, տապեալք հանապազ,
» Ցանիմք՝ ճրգնեալ զյետին ճիգն.
» Եւ այն չիցէ մեզ հերիք։

» վա՜յ մեզ. եղո՜ւկ համայն ազին գործերոյն՝
» թէ արասցէ զա եւ որդիս հօրամոյն ։ » —
Ջիրաւացին լըւեալ գործոյն ըզբողոք
Ջեկաց երկար Հայրն աստուածոց անողոք ։
— « վաղիւ, ասէ, մինչչեւ արփւոյն համասփիւռ
» Ըզճառագայթս իւր տարածեալ ի յերկիր,
» Երկինք բոլոր եւ յաստեղաց անցնիւր ոք
» Թող կապուտակ արկցեն ըզքող զերեսօք ։ » —
Անտի եւ այսր այգուն այգուն՝
Արեւն ի տես իւր սիրուհւոյն,
Արկեալ զիւրեւ հուր կըրկնոց,
Եւ զճաճանչիւք հարեալ բոց,
Յածեալ շըրջի յար թափառկոտ,
Յերկին ի ծով, յերկրի ոլորտ,
Եւ ոչ գըտեալ ուրեք, աւա՜ղ,
Ըզխօսեցեալ հարսնըն չըքնաղ,
Դարձեալ երթայ սըրտիւըն խոց,
Ողբալ զիւր բաղդ հողոյն ի ծոց ։
(Ըստ Փեդրոսի) ։

Գարեջուր կամ կասկաջուր.

Գարեջուրն կամ կասկաջուր է ալքոհլական ըմպելի մը, որ կը շինուի յարմտեաց, և մանաւանդ 'ի գարւոյ, որոյ գինն ցած է քան զուրիշ արմտիս, անոր համար և ըմպելին կոչի գարեջուր. որոյ գործածութիւնն յաճախեալ է յԵւրոպա, և մանաւանդ յԱնգղիա ուր այգի դժուարաւ բուսնելուն, գինի քիչ է ։

Գարեջուր շինելու համար պէտք է գործածել այն գարին որ բուսեալ է առատ ջրով և բաւական ջերմութեամբ, որով և առատ կ'ըլլայ իր մէջ քաղցրանիւթը ։ Գարեջրոյ շինութիւնը չորս մաս կը բաժնուի. Նախ կասկոսումն (maltage), որով փոխակերպի օսլայ 'ի քաղցրանիւթ. և այս կատարի բողբոջեցունելով զգարի չափաւոր ջերմութեամբ ։ Երկրորդ, պատրաստութիւն քաղցուցոյ կամ շաքարացումն կասկի, որ կատարի դնելով զկասկ 'ի ջուր, պատշաճ ջերմութեամբ, որով լուծանին կասկին մէջի քաղցրնիւթերը ։ Երրորդ, եփումն լուշպոլիշ (houblon), որ մասնաւոր խոտ մի է, և տայ ըմպելւոյն համեմային համ մը ։ Չորրորդ, խմորումն, որ կատարի դնելով զցուրտ կասկ խմորոյ հետ, որով քաղցրանիւթն փոխարկի յալքոհլ ։

Արդ նախ քան զամենայն, պէտք է դնել գարին մեծամեծ աղիւսակերտ կոնքերու մէջ, դնելով հետը ջուր քառապատիկ 'ի տարածոյ ։ Յուզել յաճախ, որպէս զի գարւոյ հատերուն մէջ եղած օդոյ գնդակներն դուրս արձակին, և հանել պարզուտիւ գարւոյ այն հատերը որք լողան երեսը, որք հասարակօրէն դատարկք կ'ըլլան և վտիտ ։ Գարին ջրոյ մէջ անոր համար կը դրուի որ ուռի և դիւրաւ կարենայ բողբոջիլ ։ Ձմեռը պէտք է թողուլ ջրոյ մէջ 24 ժամէ մինչև 36 ժամ, և երեք անգամ փո-